

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ**

2018 թվականի հունվարի 19-ի ժամը 14:00 հաշվետու ժողովին ներկա էին Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2017 թվականի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները`

Անցկացվել է համայնքի ավագանու 10 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր. ավագանու որոշումները սահմանված ժամկետներում առաքվել են Արդարադատության նախարարություն և Արմավիրի մարզպետարան.

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնվել նրանց դիմումներն ու բողոքները և և տրվել պատասխաններ, վարվել է նոտարական գործը, կազմվել է համայնքի բնակիչ համարվող անձանց 6 կտակ, քաղաքացիներին տրվել է պահանջվող փաստաթղթերը:

Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն , ինչպես նաև բյուջեի կատարման տարեկան տարեկան հաշվետվությունը , տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ նախագծերը, օրենքով սահմանված կարգով ապահովվել է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը: Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներով սկսվել է Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերի, ինչպես նաև տանիքի հիմնանորոգման աշխատանքները, որի համար ծախսվել է 8283,8հ/դ: Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից հատկացվել է 1698000 դրամ մանկապարտեզի համար կաթսաներ, իսկ համայնքապետարանի համար համակարգիչ և աթոռներ ձեռք բերելու համար:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև` կիսախողովակների, կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ` ինչպես նաև ձեռք են առվել միջոցներ սպասվող բերքահավաքը պատշաճ ձևով` առանց խոչընդոտների կազմակերպելու և իրականացնելու համար, կատարվել է համայնքի բնակչության տնտեսություններում անասունների հաշվառում:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

Օրենքով սահմանված կարգով վարվել է է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել են ամառային և ձմեռային զորակոչերը, համայնքի բնակիչ 3 զորակոչիկների էջմիածնի ավտոդպրոցում սովորելու համար` անվճար երթևեկություն ապահովելու նպատակով, յուրաքանչյուրին հատկացվել է 20.000-ական դրամ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Ամբողջովին լուսավորվորվել է համայնքի կենտրոնական փողոցը, խճապատվել են համայնքի մի շարք փողոցներ: Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ, Համայնքի տարածքում մի քանի անգամ ացկացվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցները, գյուղամիջյան հատվածը, մայրուղու գյուղամիջյան տարածքը աղբանոցի տարածքը, համայնքի բնակիչներին տրվել շինարարության մեկ թույլտվություն, ձևակերպվել է շինարարության ավարտական մեկ ակտ:

Առևտրի և ծառայությունների բնագավառում

Տրվել է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն, ինչպես նաև հսկողություն է իրականացվել առևտրի կետերում /խանութներում/:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Կանանց Միջազգային օրվան՝ Մարտի 8-ին, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի և Շուշիի ազատագրմանը՝ Մայիսի 9-ին, Անկախության օրվան՝ Սեպտեմբերի 21-ին, և Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին, ինչպես նաև հատկացվել հատկացվել են նվերներ: Տեառնդառաջի կապակցությամբ համայնքի 5 նորապսակ ընտանիքների շնորհավորելու համար յուրաքանչյուրին հատկացվել է 15000 – ական դրամ:

Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներից հատկացվել է 1000000 /մեկ միլիոն/ դրամ՝ 2015 թվականի եղեռնի զոհերի հիշատակն անմահացնող խաչքարի ձեռք բերման համար:

Սոցիալական պաշտպանության բնագավառում

Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին, համայնքի երիտասարդ ընտանիքներին, ինչպես նաև Դարաբաղա- Ադրբեջանական հակամարտությանը մասնակցած 2 զինծառայողի հանգիստը Քոբուլդիում անցկացնելու համար տրամադրվել է 100.000 դրամ՝ ընդամենը 7290000 դրամ:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 90 որոշում, արձակվել է 16 կարգադրություն: Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:

Ժամանակին վճարվել է համայնքապետարանի և մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:

Տարվա կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ **հարկային եկամուտները**՝ հողի հարկ պլան 14000,7հ/դ , փաստացի 14346,6 հ/դ, կատարողական 102,3%, գույքահարկ պլան

4700,0 հ/դ, փաստացի 5789,5 հ/դ, կատարողական 123,2 %, տեղական տուրքեր
ալան 287,0 հ/դ, փաստացի 310,7/դ, կատարողական 108,3%, այլ ոչ հարկային
եկամուտներ ալան 331,0 հ/դ, փաստացի 354,5 հ/դ, կատարողական
107,7%, դոտացիա ալան 45464,6 հ/դ, փաստացի 45464,6 հ/դ, կատարողական
100%, հողի օտարումից սպասվելիք գումար ալան 1000,0հ/դ, փաստացի 1311,1հ/դ
կատարողական 131,1 %, տարեսկզբի ազատ մնացորդ 16186,9 հ/դ , ընդամենը
եկամուտներ` ալան 81970,2 հ/դ, փաստացի 84046,9 հ/դ, կատարողական 102,5%:
Ծախսեր` Տեղական ինքնակառավարում ալան 32680,0, հ/դ, փաստացի 27559,6 հ/դ,
կատարողական 84,3 %, սոց. օգնություն ալան 7300,0 հ/դ, փաստացի 7290,0 հ/դ,
կատարողական 99,9%, մշակույթ, սպորտ և կրոն ալան 5750,0 հ/դ, փաստացի
5643,8 հ/դ, կատարողական 98,2%, սան մաքրում ալան 4035,0հ/դ, փաստացի
4034,6/դ, կատարողական 100%, կրթություն և գիտություն ալան 7273,0 հ/դ,
փաստացի 3350,4հ/դ, կատարողական 46,1 %, ընդհանուր բնույթի հանրային
ծառայություններ ալան4900.0հ/դ, փաստացի 2925,1 հ/դ , կատարողական 59,7% ,
արտաքին լուսավորում ալան 1300,0 հ/դ, փաստացի 1298,0հ/դ, կատարողական
99,8 %, ճանապարհների վերանորոգում ալան 1000,0 հ/դ, փաստացի 1000,0հ/դ,
կատարողական 100 %, գյուղատնտեսություն ալան 480,0 հ/դ, փաստացի 0հ/դ,
կատարողական 0 %, պահուստային ֆոնդ 65,3հ/դ ֆոնդային բյուջե ալան
17186,9հ/դ, փաստացի 12049,2 հ/դ, կատարողական 70,1 %, Ընդամենը ծախսեր
ալան 81970,2 հ/դ, փաստացի 65150,7 հ/դ, կատարողական 79,5%:

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ
հիմնախնդիրները`

Համայնքում առկա խնդիրներն են

Մշակույթի տան շենքի հիմնանորոգում:

Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը` ջրատար խողովակները
ամբողջությամբ վնասված են:

Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:

Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման
աշխատանքները:

Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:

Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ
օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:

Անմխիթար վիճակում է գտնվում համայնք սնուցող էլեկտրական ցանցը,
անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի` կապված լարերի
անպիտանիության հետ:

Համայնքապետարանի շենքի վերանորոգում:

Համայնքում հանդիսությունների սրահի բացակայություն:

Գեղակերտ համայնքի ղեկավար

Ս. Առաքելյան
19.01.2018թ

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ 2017 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2018 թվականի հունվարի 19-ի ժամը 14:00 հաշվետու ժողովին ներկա էին Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2017 թվականի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝

Անցկացվել է համայնքի ավագանու 5 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր. ավագանու որոշումները սահմանված ժամկետներում առաքվել են Արդարադատության նախարարություն և Արմավիրի մարզպետարան.

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնվել նրանց դիմումներն ու բողոքները և և տրվել պատասխաններ, վարվել է նոտարական գործը, կազմվել է համայնքի բնակիչ համարվող անձանց 2 կտակ, քաղաքացիներին տրվել է պահանջվող փաստաթղթերը:

Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում համայնքի բյուջեում դրանում առաջարկվող փոփոխություններն , տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ նախագծերը, օրենքով սահմանված կարգով ապահովվել է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը: Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներով սկսվել է Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերի, ինչպես նաև տանիքի հիմնանորոգման աշխատանքները, որի համար ծախսվել է 8283,8հ/դ:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև՝ կիսախողովակների, կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

Օրենքով սահմանված կարգով վարվել է է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել և ձմեռային զորակոչը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

Ամբողջովին լուսավորվորվել է համայնքի կենտրոնական փողոցը, խճապատվել են համայնքի մի շարք փողոցներ: Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ, Համայնքի տարածքում անգամ ացկացվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցները, գյուղամիջյան հատվածը, մայրուղու գյուղամիջյան տարածքը աղբանոցի տարածքը:

Առևտրի և ծառայությունների բնագավառում

Տրվել է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն, ինչպես նաև հսկողություն է իրականացվել առևտրի կետերում /խանութներում/:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Անկախության օրվան՝ Սեպտեմբերի 21-ին, և Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին, ինչպես նաև հատկացվել հատկացվել են նվերներ: Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներից հատկացվել է 1000000 /մեկ միլիոն/ դրամ՝ 2015 թվականի եղեռնի զոհերի հիշատակն անմահացնող խաչքարի ձեռք բերման համար:

Սոցիալական պաշտպանության բնագավառում

Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, համայնքի երիտասարդ ընտանիքներին, ընդամենը 3340,0 հ/դ:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 90 որոշում, արձակվել է 16 կարգադրություն: Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:

Ժամանակին վճարվել է համայնքապետարանի և մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:

Կիսամյակի կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ **հարկային եկամուտները**՝ հողի հարկ պլան 9500,7/դ , փաստացի 10313,6 հ/դ, կատարողական 108,6%, գույքահարկ պլան 1540,0 հ/դ, փաստացի 2629,5 հ/դ, կատարողական 170,7 % , տեղական տուրքեր պլան 144,0 հ/դ, փաստացի 166,0հ/դ, կատարողական 115,3%, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 96,0 հ/դ, փաստացի 113,4 հ/դ, կատարողական 118,1%, դոտացիա պլան 22732,3 հ/դ, փաստացի 22732,3 հ/դ, կատարողական 100%, տարեսկզբի ազատ մնացորդ 16186,9 հ/դ , ընդամենը եկամուտներ՝ պլան 35013,0 հ/դ, փաստացի 37696,3 հ/դ, կատարողական 107,7%: **Ծախսեր**՝ Տեղական ինքնակառավարում պլան 19180,0,0, հ/դ, փաստացի 14118,5 հ/դ, կատարողական 73,6 % , սոց. օգնություն պլան 3300,0 հ/դ, փաստացի 3340,0 հ/դ, կատարողական 101,2%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 5200,0 հ/դ, փաստացի 5118,8 հ/դ, կատարողական 98,4%, սան մաքրում պլան 2185,0հ/դ, փաստացի 2194,0հ/դ, կատարողական 100,4%, կրթություն և գիտություն պլան 6068,0 հ/դ, փաստացի 2150,0հ/դ, կատարողական 35,4 % , ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ պլան 4700.0հ/դ, փաստացի 2745,1 հ/դ , կատարողական 58,4% , արտաքին լուսավորում պլան 1300,0 հ/դ, փաստացի 1298,0հ/դ, կատարողական 99,8 % , ճանապարհների վերանորոգում պլան 1000,0 հ/դ, փաստացի 1000,0հ/դ, կատարողական 100 % , գյուղատնտեսություն պլան 480,0 հ/դ, փաստացի 0հ/դ, կատարողական 0 % , պահուստային ֆոնդ 65,3հ/դ ֆոնդային բյուջե պլան

15486,9հ/դ, փաստացի 10351,2 հ/դ, կատարողական 66,8 %, Ընդամենը ծախսեր
այլան 58965,2 հ/դ, փաստացի 42315,6 հ/դ, կատարողական 71,8%:

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ
հիմնախնդիրները՝

Համայնքում առկա խնդիրներն են

Մշակույթի տան շենքի հիմնանորոգում:

Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները
ամբողջությամբ վնասված են:

Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:

Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման
աշխատանքները:

Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:

Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ
օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:

Անմխիթար վիճակում է գտնվում համայնք սնուցող էլեկտրական ցանցը,
անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի՝ կապված լարերի
անպիտանիության հետ:

Համայնքապետարանի շենքի վերանորոգում:

Համայնքում հանդիսությունների սրահի բացակայություն:

Գեղակերտ համայնքի ղեկավար

Ս. Առաքելյան
19.01.2018թ